ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 30 հուլիսի 2008թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 1-ին դատական կազմը

Նախագահությամբ՝ Վ. Հովհաննիսյանի

Անդամակցությամբ՝ Զ.Ղուկասյանի

Վ. Պողոսյանի

Քննության առնելով ՀՀ քաղաքացի Միշա Հարությունյանի դիմումի ընդունելիության հարցը

ՊԱՐԶԵՑ

1. Քաղ. Միշա Հարությունյանը 24.07.2008թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ վիճարկելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426^1 հոդվածի, 426^8 հոդվածի 1-ին մասի և 426^9 հոդվածի դրույթների սահմանադրականությունը:

Դիմումը ներկայացվել է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27, 28 հոդվածների, ինչպես նաև սահմանադրական դատարանի Կանոնակարգի պահանջներին համապատասխան: Պահպանվել է սահմանադրական դատարան դիմելու՝ օրենքով նախատեսված ժամկետը: Դիմումին կից ներկայացվել է պետական տուրքի վճարման անդորրագիրը:

Դիմողը գտնում է, որ սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները և իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթները հակասում են ՀՀ Սահմանադրությանը:

2. Վերջնական դատական ակտ համարվող վճռաբեկ դատարանի 21.01.08թ. որոշմամբ դիմողի նկատմամբ կիրառվել է միայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426^1 հոդվածը:

Դիմողի կողմից վիճարկվող մյուս երկու դրույթներից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426^9 հոդվածը դիմողի նկատմամբ ընդհանրապես չի կիրառվել:

Դիմողի կողմից վիճարկվող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426^8 հոդվածի 1-ին մասը կիրառվել է ՀՀ Հարավային քրեական դատարանի 05.03.2008թ. «Քրեական գործը դատական քննության նշանակելու մասին» որոշմամբ, որը վերջնական դատական ակտ չէ, քանի որ ենթակա է բողոքարկման:

Գործը քննության ընդունելու մասին որոշման առկայության պայմաններում դիմողը չի սպառել դատական պաշտպանության միջոցները:

Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 69 հոդվածի 1-ին մասով՝ Սահմանադրական դատարանի 1-ին կազմը

ՈՐՈՇԵՑ

1. Միշա Հարությունյանի դիմումը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426^8 հոդվածի 1-ին մասի և 426^9 հոդվածի դրույթների սահմանադրականությունը վիճարկելու մասով դիմումի հիման վրա գործի քննությունը մերժել:

2. Միշա Հարությունյանի դիմումը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426^1 հոդվածի դրույթի սահմանադրականությունը վիճարկելու մասով, ընդունել քննության, կազմել գործ, որով պատասխանող կողմ ճանաչել ՀՀ Ազգային Ժողովին:

3.Առաջարկել սույն գործը միավորել Սերինե Ֆլջյանի թիվ 6-76 գործի հետ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ